բուն , եւ ըստ կարելւոյն ներդաշնակ ընթանան միջոցներու գործադրութեան մէջ ։ Դասախօսական հեղինակութեան ու դպրոցին բարոյականին չի կրնար աւելի մեծ հարուած մը ըլլալ քան այն յախուռն դատաստանը , զոր ծնողք իրենց տղոց ներկայութեան դասատուին դէմ կ՝արձակեն անոնց անհիմն եւ մինչեւ իսկ հիմնաւոր մէկ գանգատին վրայ ։ Ընտանիքի եւ դպրոցի վարիչները կրթութեան գործին մէջ համանման իրաւունքներ ու պարտականութիւններ ունենալով՝ պարտին նաեւ համահաւասար ակնածանօք վերաբերուիլ իրարու նկատմամբ · անոնք զիրար հակասելու չեն երբեք , այլ յաւէտ հաստատելու եւ լրացընելու են ։

ՄԽԻԹԱՐ ՊՈՆՏԱՑԻ

ԻՄ "ՆՈՒԱԳՆԵՐ,,ԻՑ

* * *

Գեղեցկուհի՛ , բառ եմ ուզում —
Բառարանում բառ չը կայ ·
Զքնաղ փերի՛ , տառ եմ ուզում —
Տպարանում տառ չը կայ ։

Օ՛ խնդրում եմ , բառեր տուէ՛ք —
Պատմեմ անհուն իմ սէրը ·
Աղաչո՛ւմ եմ , տառեր տուէ՛ք —
Տպեն սիրոյս վէպերը ։

Սէրըս անզուսպ , սէրըս բուռըն ,
Սէրըս մե՛ծ է ու հսկայ ·
Նորա տխուր պատմութեանը ,
Նորա վէպին վերջ չը կայ ։

Թէ վիթխարի , սէգ լեռները
Թղթերի կոյտ դառնային ,
Իսկ ծովերի ջուրը՝ մելան —
Զէի՛ն բաւիլ իմ վէպին ։

* * *

Թո՛ղ ծանակեն նուաղները
Եւ ինձ կոչեն մի դրչակ ·
Թո՛ղ խորտակի քննադատը
Իմ քընարը դրչի տակ ։

Թո՛ղ մեր անմիտ թերուսները
Ծաղր նիւթեն ինձ համար.
Թո՛ղ իմ չկամ ընկերները
Ոտնահարեն անդադար։

Թո՛ղ ոխերիմ խմբագիրը
Լուտանք թափի իմ գլխին...
Հո՛գ չէ բնաւ. ես անտարբեր
Կը համբերեմ ամենին։

Միայն թէ դո՛ւ չը պարսաւես,
Ականջ դնես երգերիս.
Միայն թէ դո՛ւ ինձ հասկանաս,
Մի ճար անես վէրքերիս...

11/V, 1902
Թիֆլիս.

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՍԵՊԱՁԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՎԱՆԱՅ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ի ՁԵՌՆ Ա. Հ. ՍԻՑՍԻ

Բ (*)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ո՞ր ատենուան պարտինք վերագրել Վանայ արձանագրութիւնները։ Դոկտ. Մորթման կը կարծէր թէ այդ արձանագրութիւններէն ամենէն հինը Քրիստոսի թուականէն գրեթէ 700 տարիէն անդին չ'անցնիր. բայց ես կը կարծեմ կարենալ ցոյց տալ թէ Պ. Ջորջ Սմիթ աւելի ուղիղ էր դնելով թագաւորաց շարքը, որոնց յիշատակարանները մեր ձեռքն ունինք. ընդմէջ ասուրական Սաղմանասար Բ եւ Տիգլաթ-Պիլէսէր Բ թագաւորաց։

Նախ եւ առաջ նկատելի է, վանեան նշանագրաց ձեւերուն, անոնց գործածութեան եղանակին եւ արձանագրութեանց ոճոյն զարմա-

---

(*) Առաջին մասը տեսնել «Բանասէր» 1899 (Ա. տարի), երես 360-383, ուր ըսած ենք եւ կը կրկնենք թէ «Պրոֆ. Սէյսի ներկայ ուսումնասիրութիւնն... ինչ ինչ փոփոխութիւններով կրնանք օգտակարապէս գործածել»։

ԽՄԲ. ԲԱՆԱՍԷՐԻ